

3012

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Եսայան Մերի Սամվելի

ԱՆԳԼԵՐԵՆ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

ԺԳ.00.02 – «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն  
լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2023

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

**Գիտական ղեկավար՝** մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Կարապետյան Իգոր Կարապետի

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝** բանասիրական գիտությունների դոկտոր Հարությունյան Լուսինե Արմենի  
մանկավարժական գիտությունների թեկնածու Պարսբյան Մետաքսյա Ազատի

**Առաջատար կազմակերպություն՝** Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան


Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թվականի մարտի 30-ին, ժամը 12<sup>00</sup>-ին, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի 020 մասնագիտական խորհրդում:  
Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի, 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թվականի փետրվարի 13-ին:

Մանկավարժության 020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Թերեզա Յուրիի Ազատյան

  
11-3012

4635

### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը. Տեխնիկական բուհերում սովորաբար ուսումնասիրվում են մեկ և ավել օտար լեզուներ, որի նպատակն է զարգացնել օտարալեզու գիտատեխնիկական բովանդակության անհրաժեշտ գրականություն ընթերցելու, վերարտադրելու, թարգմանություններ կատարելու ուսանողների կարողությունները: Ակնհայտ է, որ հնարավոր չէ անզվեբե՛նով լույս տեսնող գիտական տեքստերը ժամանակին և ամբողջությամբ թարգմանել հայերեն, ուստի տեխնիկական բուհի ուսանող պետք է կարողանա իր մասնագիտության շրջանակներում թարգմանել գիտական տեքստեր: Այդպիսի աշխատանք իրականացնելու համար ուսանողները պետք է ոչ միայն օտար լեզուներ յուրացնեն, այլև խորացնեն իրենց մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները:

Ուստի, նպատակ է դրվում ուսանողների մեջ զարգացնել տեխնիկական թարգմանչի այն նվազագույն ունակությունները, որոնք թույլ կտան նրանց ազատ օգտվել օտարալեզու մասնագիտական գրականությունից և անկաշկանդ հաղորդակցվել տվյալ ոլորտի մասնագետների հետ:

Տեխնիկական բուհերում այսօր դեռևս խնդիր է օտար լեզուներին հատկացվող ոչ բավարար ժամաքանակը: Անհրաժեշտություն է առաջանում ընտրել և կիրառել տեխնիկական տեքստերը թարգմանելու կարողության ձևավորման ժամանակակից տեխնոլոգիաներ: Այդպիսի մոտեցումը կարևոր պայման է տեխնիկական բուհերի ուսանողների՝ մասնագիտական տեքստերի թարգմանելու կարողության ձևավորման համար: Անշուշտ, խոսքը տեխնիկական տեքստերի թարգմանիչների պատրաստման մասին չէ, քանի որ այն իրականացնում են տեխնիկական բուհերի թարգմանության ֆակուլտետներում:

Գիտատեխնիկական թարգմանություն կատարելու կարողության ձևավորման նպատակով անհրաժեշտ է նախ և առաջ մշակել հստակ ուղղվածություն՝ հաշվի առնելով թե՛ թարգմանության տեսության առանձնահատկությունները, թե՛ պրակտիկայի ժամանակակից զարգացման միտումները:

Կարևոր խնդիր է ուսանողներին իմաստային պատճենման տարրերին ծանոթացնելը, առ այն, որ թարգմանվող եզրույթի կառուցվածքը համապատասխանում է թիրախային և սկզբնաղբյուր հանդիսացող լեզուների նորմերին:

Ինչ վերաբերում է նկարագրական կառույցներով տերմինների թարգմանությանը, ապա այդ հնարը կիրառվում է անհամարժեք տերմինների կամ տերմին-իրակությունների /ոեայիա/ թարգմանության ժամանակ:

Գիտական տեքստերը թարգմանելու կարողության ձևավորմանն զուգընթաց մեթոդական գրականության մեջ հստակ մեթոդիկաներ են մշակված բառային փոխակերպումների /ընդհանրացում, կոնկրետացում/ թարգմանության ուսուցման վերաբերյալ: Կարևորվում է կոնկրետ գիտաճյուղի շրջանակներում բառային փոխակերպումների /ընդհանրացում, կոնկրետացում/ թարգմանության ուսուցման հիմնախնդիրը:

Գիտական տեքստերի թարգմանության ուսուցման խնդիրներին շատ գիտնականներ են անդրադարձել՝ Ա.Լ. Պոմպյանսկին, Ա. Գ. Շվեյցերը, Վ. Ն. Կոմիսարովը, Լ. Կ. Լատիշևը, Ռ. Կ. Մինյար-Բելոուզևը և այլք:

Գիտատեխնիկական տեքստերի թարգմանության գործընթացում հատկապես կարևորվում են հետևյալ լեզվաբանների (Մ.Մ. Бахтин 1996, А.А. Залевская 2000, В.В. Красных 2003, Е.С. Кубрякова 2004, S. Moirand 1990, P. Pecvan 2009, G. Rondeau 1983 և այլք), թարգմանիչների (И.С. Алексеева 2004, Д. И. Ермолович, В.А. Иовенко 2005, В.Н. Комиссаров 2001, А.Н. Крюков 1988, Л.К. Латышев 2005, А.Л. Семенов 2005, Р.К. Миньяр-Белоручев 1996, О.А. Фирсов 2003, Г.В. Чернов 2008, М.Я. Цвиллинг 1996, С. J. Delisle 1993, D. Gile 2001 և այլք) աշխատությունները:

Հետազոտության առաջնային խնդիրները լուծելուն նպաստել են թարգմանության տեսության և թարգմանչական կոմպետենցիայի ձևավորմանը նվիրված աշխատանքները (Ս.Ք. Գասպարյան 2008, Ս.Ս. Սեֆերյան, А.М. Арутюнян, И. К. Карапетян 2010, М.П. Брандес 2003, В.С. Виноградов 2001 և այլք): Գիտատեխնիկական թարգմանության ուսուցման հիմքում ընկած են հոգեբանության ասպարեզում կատարված գիտական հետազոտությունները (Л.С. Выготский 1989,

И.А. Зимняя 2003, А.К. Маркова 1996, Д.И. Фельдштейн 1998), օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ոլորտում (Н. Н. Гавриленко 2008, Г. Э. Мирам 2006, В.И. Проворотов 2003, М. Lederer, D. Selescovitch 2002 և այլք), ինչպես նաև տեքստի հետ աշխատանքի և առաջադրանքների և վարժությունների ընտրության և կիրառմանը վերաբերող (Մ.Գ. Աստվածատրյան 1985, Г.А. Аронова 2009, Т.М. Балыхина 2001, А.М. Смолкин 2001, А.В. Хуторской 2003 և այլք) աշխատանքները:

Հետազոտության համար արժեք են ներկայացնում թարգմանության, մասնավորապես փոխատեղման-փոխակերպման թարգմանաբանական տեսությունների շրջանակներում ձևավորված ռազմավարություններին նվիրված աշխատանքները (В.Н. Комиссаров, И.И. Ревзин, А.Д. Швейцер):

Անգլերեն գիտատեխնիկական տեքստի լեզվաոճական վերլուծության ուսուցմանը բազում աշխատանքներ են նվիրված (Աբրահամյան 1982, Halliday 1996, Koulaïdis and Tsatsaroni 1996, Françoise Salager-Meyer 2011, Койкова 2015 և այլք):

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ** անգլերեն գիտական տեքստերի թարգմանության կարողության ձևավորման մեթոդական համակարգի մշակումն ու ներդրումն է:

Հետազոտության **օբյեկտն** է անգլերենի ուսուցումը տեխնիկական բուհում:

Հետազոտության **առարկան** է անգլերեն գիտական տեքստերը թարգմանելու կարողության ձևավորման գործընթացը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝**

1. ուսումնասիրել գիտական տեքստի թարգմանության, ինչպես նաև թարգմանության ուսուցմանը վերաբերող գիտամանկավարժական գրականություն,
2. համակարգել ուսուցողական նպատակներով կիրառվող գիտական տեքստերը,
3. հստակեցնել ուսուցողական նպատակներով կիրառվող գիտական տեքստերի ընտրության սկզբունքները, դրանց թարգմանության ուսուցման ռազմավարությունները,
4. մշակել ուսուցողական նպատակներով կիրառվող գիտական տեքստերի թարգմանություն կատարելու կարողությունները զարգացնող վարժությունների համակարգ,

5. փորձարարական ուսուցման միջոցով հիմնավորել առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը:

#### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾԸ.**

Ոչ լեզվական, տեխնիկական բուհում անգլերեն գիտական տեքստերի թարգմանելու կարողության ձևավորման գործընթացը շարունակաբար կբարելավվի, եթե

1. կիրառվեն գիտական, գիտահանրամատչելի, գեղարվեստական, ուսումնական և բնագրային տեքստերի ընտրության և ուսուցման ինչպես ընդհանուր դիդակտիկական, այնպես էլ մասնավոր սկզբունքները,

2. բնագրային տեքստերին նախորդեն ուսումնական, գիտական տեքստերին՝ գեղարվեստական և գիտահանրամատչելի տեքստերը,

3. մշակվեն բառային, քերականական, գործաբանական փոխներթափանցման հաղթահարման հստակ վարժություններ՝ ըստ թարգմանվող տեքստի շուրջ կազմակերպվող նախաթարգմանական, թարգմանական, հետթարգմանական փուլերի:

Հետազոտության ընթացքում առաջադիր խնդիրների լուծման համար ընտրվել և կիրառվել են հետևյալ **մեթոդները՝**

**1.տեսական հետազոտության մեթոդներ.** թեմային առնչվող գիտական և ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրություն, վերլուծություն,

**2.Էմպիրիկ հետազոտության մեթոդներ.**

- սոցիոլոգիական հարցում
- հայտորոշիչ թեստավորում
- փորձարարական ուսուցում

**3.վիճակագրական հետազոտության մեթոդներ.** թեստավորման և փորձարարական ուսուցման արդյունքների տվյալների մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

#### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ.**

1.Մեդիատիվ կոմպետենցիայի զարգացման տեսանկյունից հստակեցվել են ուսանողի այն կարողությունները, որոնց զարգացումը անհրաժեշտ պայման է գիտական տեքստերի արդյունավետ թարգմանության համար:

2.Մշակվել և կիրառվել է գիտական տեքստերի (ֆիզիկա) թարգմանություն կատարելու ուսանողների կարողությունների զարգացման վարժությունների նոր համակարգ, համապատասխան դասաշար և հիմնավորվել է վերջինիս արդյունավետությունը:

3. Ստեղծվել է մասնագիտական կողմնորոշման տեքստերի (ֆիզիկա) թարգմանություն կատարելու ուսանողների կարողությունների զարգացման մեթոդական համակարգ, որը կարող է նպաստել ուսանողների մեդիատիվ, լեզվաբանական, հաղորդակցական կոմպետենցիաների ձևավորմանը և զարգացմանը:

4.Ֆիզիկայի՝ անգլերեն ենթալեզվի դասավանդման համար կիրառվել է մոլտիմեդիայի մեթոդը: Google Classroom համացանցային հարթակում ներկայացված է 8 թեմատիկ դասերի սահիկներ, որոնցից յուրաքանչյուրը ներառում է վարժությունների դասակարգված համակարգ:

5. Microsoft Office Excel ծրագրի օգնությամբ վերլուծվել են նախափորձարարական և հետփորձարարական թեստավորման արդյունքները, ստեղծվել է արդյունքների վերլուծության մոդել, որը թույլ է տալիս ըստ առաջադրանքների՝ իրականացնել արդյունքների վերլուծություն ինչպես առանձին, այնպես էլ բոլոր խմբերում միաժամանակ:

#### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ուսումնասիրվել և վերլուծվել են թարգմանաբանական, մեթոդական, ընդհանուր լեզվաբանական գրականություն՝ գիտական տեքստերի թարգմանության ուսուցման տեսանկյունից: Ստեղծվել է գիտական տեքստերի թարգմանության ուսուցման արդյունավետ մոդել, որը կարող է հիմք ծառայել համապատասխան մեթոդական համակարգի շարունակական վերանայման և բարելավման համար:

#### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ոչ լեզվական բուհում անգլերենի ուսուցման, դասագրքերի և ձեռնարկների, ծրագրերի ստեղծման և կիրառման գործընթացում: Մեդիատիվ կարողությունները զարգացնող առաջադրանքների կիրառումը կարող է նպաստել ֆիզիկայի անգլերենի դասընթացների արդյունավետության բարձրացմանը:

#### **ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

1. Գիտական տեքստը թարգմանելիս պահպանվում է նրա տեղեկատվական հետաքրքրությունը և նորույթը: Տեքստի հիմնական բովանդակությունը ներկայացնելիս համապատասխան լեզվական միջոցներով փոխանցվում է թարգմանվող տեքստի գիտական նյութը:

2. Թարգմանության ուսուցման հիմնական նպատակը՝ ուսանողների մոտ թարգմանություններ կատարելու կարողությունների ձևավորումը ենթադրում է նրա հասարակական, հաղորդակցական, հանրալեզվաբանական, միջմշակութային, մեդիատիվ կոմպետենցիաների շարունակական, փոխկապակցված զարգացում:

3. Տեխնիկական բուհի ուսանողը շարունակաբար զարգացնում է իր հաղորդակցական-լեզվաբանական կոմպետենցիան, տարբերակում է գիտական և ոչ գիտական ոճի տեքստերը, առանձնացնում նրանցում մասնագիտական բառապաշարը, մասնագիտական եզրույթները և տերմինակապակցությունները, համարժեք և ոչ համարժեք բառապաշարը:

4. Գիտական տեքստի թարգմանության ընթացքում արդյունավետ են թե՛ վերևից ներքև (top-down), թե՛ ներքևից վերև (bottom-up) ռազմավարությունները: Մինչդեռ միջնշանային թարգմանության հիմքում ընկած են խոսքային նշաններին փոխարինող ոչ խոսքային հաղորդակցական միջոցները՝ նշանները, պատկերները, գծապատկերները, աղյուսակները: Այս պարագայում արդյունավետ է կիրառել վերճանաչողական ռազմավարություն, որի հիմքում ընկած են նախ և առաջ ուսանողի մասնագիտական գիտելիքները:

#### **ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է ԵՐԵՔ ՓՈՒԼՈՎ**

Առաջին փուլում (2015–2016 թթ.) հստակեցվել են հետազոտության խնդիրները, հավաքագրվել է թեմային վերաբերող գրականություն, որոշվել են հետազոտության փուլերը:

Երկրորդ փուլում (2017–2018 թթ.) վերլուծվել են համապատասխան դասընթացների ծրագրերը, ուսումնամեթոդական գրականությունը, փորձարարական ուսուցման համար անհրաժեշտ ուսանողների ճանաչողական պահանջմունքները:

Երրորդ փուլում (2018–2019 թթ.) իրականացվել է փորձարարական ուսուցում, որի ընթացքում ստուգվել է ընտրված և մշակված վարժությունների համակարգի արդյունավետությունը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ** ապահովվում է հետազոտության իրականացման մեթոդաբանությամբ, տեսական մոտեցումների արդիականությամբ, կիրառվող մեթոդների հավաստիությամբ:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ** իրականացվել է Հայ-ռուսական համալսարանի օտար լեզուների տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնում, տարբեր ամսագրերում լույս տեսած 6 գիտական հրապարակներում, որոնց ցուցակը բերված է սեղմագրի վերջում:

#### **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԾԱՎԱԼԸ**

Ատենախոսությունն ընդգրկում է ներածություն, երկու գլուխ, եզրակացություն, գրականության ցանկ, գծապատկերներ, տրամազեր, աղյուսակներ, հավելվածներ: Ատենախոսությանը կից Google Classroom համացանցային հարթակում ներկայացրել ենք 8 թեմատիկ դասերի սահիկներ, Microsoft Excel ծրագրով ստեղծված թեստավորման արդյունքների վերլուծության մոդել:

#### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Աշխատանքի ներածական մասում հիմնավորված է հետազոտության արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացված է հետազոտության վարկածը, տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլխի «Անգլերենի գիտատեխնիկական /ֆիզիկայի/ ենթալեզվի ուսուցման առանձնահատկությունները» առաջին «Ժամանակակից անգլերենի

գիտատեխնիկական /ֆիզիկայի/ տեքստի ոճաժանրային առանձնահատկությունները» ենթազխում զուգահեռներ են անցկացվում գիտական ոճի և գրական լեզվի գործառական այլ ոճերի միջև, բացահայտվում գիտական ենթալեզվի ամենակարևոր առանձնահատկությունները:

Երկրորդ՝ «**Գիտատեխնիկական տեքստի բառապաշարի ուսուցման առանձնահատկությունները**» խորագիրը կրող ենթազխում ներկայացվում են մասնագիտական /ֆիզիկայի ենթալեզվի/ բառապաշարի առանձնահատկությունները և վերջինիս ուսուցման հաջորդականությունն ու փուլերը: Մասնագիտական բառապաշարի վերլուծությամբ ներկայացվում են ուսուցողական նպատակներով նյութերն ընտրելու և գնահատելու սկզբունքները: Ընդգծվում է ուսանողների պահանջմունքների վերլուծության դերը գիտատեխնիկական անգլերենի դասընթացում:

Երրորդ՝ «**Գիտատեխնիկական տեքստի քերականական կառույցների ուսուցման դժվարությունները**» ենթազխում քննության են առնվում անգլերենի քերականական կաղապարները՝ տարբեր բայաձևերի տիպական օրինակներով: Շեշտվում է այն միտքը, որ տեխնիկական բուհում սովորող ուսանողը պետք է հստակ պատկերացում ունենա քերականական կառույցների գործառնության մասին, հատկապես երբ իրականացնում է գիտական տեքստի թարգմանություն:

Երկրորդ գլխի «**Անգլերեն գիտատեխնիկական տեքստի թարգմանության ուսուցման մեթոդական համակարգը և դրա փորձարարական հիմնավորումը**» առաջին «**Ուսանողի մեղիատիվ կոմպետենցիայի ձևավորման նախադրյալները գիտատեխնիկական տեքստի ուսուցման գործընթացում**» ենթազխում սահմանվում է «մեղիացիա» հասկացությունը որպես լեզվաբանական միջնորդության տեսակ:

Տեխնիկական ուղղվածության (ֆիզիկայի և ինժեներիայի ինստիտուտ, ՀՌՀ) ուսանողներին օտար լեզու դասավանդելու նպատակներից մեկը համարվում է նրանց մոտ հաղորդակցական կարողության զարգացումը: Դասավանդման բոլոր փուլերում անհրաժեշտ է հստակեցնել ուսանողների մասնագիտական և հաղորդակցական պահանջների դիմամիկան և ուղղվածությունը, որովհետև գիտատեխնիկական բառապաշարի յուրացումը տեղի է ունենում արդյունավետ և արագ, երբ ուսուցման

հիմնական նպատակն է դառնում հաղորդակցական կոմպետենցիայի զարգացումը: Նշվում է որ, գիտատեխնիկական տերմիններն արագ են յուրացվում, երբ առաջին պլան են մղվում ուսանողների մասնագիտական և հաղորդակցական պահանջները:

Տրվում է ուսանողների մեղիատիվ կոմպետենցիայի զարգացման օպտիմալ մոդելը, որը ստեղծելիս հաշվի են առնվել տեքստի վերլուծության մոդելների բովանդակությունը և գործառական բնութագրերը: Ներկայացվում են առաջարկվող մոդելի հիմնական բաղադրիչները՝

- լեզվական միավորների յուրացման, տվյալների հետ աշխատելու (տեղեկատվության որոնում, բառապաշարի դասակարգում, համապատասխանություն և այլն), բովանդակության վերլուծության, որակական և քանակական մեթոդները:

Ներկայացվում են նաև տեքստի թարգմանական վերլուծության գործընթացում օգտագործվող մեթոդները՝ փոխառությունը, պատճենումը, բառացի թարգմանությունը կամ փոխատեղումը:

Մեթոդական մակարդակում կարևորվում են դասավանդման այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են գրույցը, տեքստերի բանավոր և գրավոր վերլուծությունը, սեփական տեքստերի ստեղծումը, վերապատմումը: Համապատասխան հիմնավորմամբ ներկայացվում են նաև առաջարկվող մոդելի կարևոր բովանդակային բաղադրիչ հանդիսացող հաղորդակցական, փոխհատուցման, ինչպես նաև բառապաշարի ուսուցման ռազմավարությունները:

Ըստ առաջարկվող մոդելի ընտրվում են մեղիատիվ հմտությունների և կարողությունների զարգացմանն ուղղված բառապաշարային-քերականական, վերլուծական և թարգմանական վարժությունները:

Երկրորդ՝ «**Ֆիզիկայի մասնագիտական տեքստի թարգմանության ուսուցման վարժությունների համակարգ**» ենթազխում դասակարգվում են թարգմանական վարժություններն ըստ դրանց կատարման ընթացակարգերի:

Ըստ իրենց բովանդակային և գործառական բնութագրերի ներկայացվում են նախաթարգմանական վարժությունները: Լեզվական հմտությունների ձևավորմանը միտված վարժություններից առանձնացվում են բառապաշարի հարստացման,

բառապաշարի ճիշտ օգտագործման կամ փոխակերպման, պրոբլեմի վրա հիմնաված քերականական վարժությունները:

Համապատասխան վերլուծությամբ ընտրվում են նաև թարգմանական վարժությունները՝ թելադրություն-թարգմանություն (Dictation-translation), վերացական թարգմանություն (Abstract translation in written form), կոնկրետացում, ընդհանրացում (Concretization/ generalization) և այլն:

Երրորդ՝ «Ֆիզիկայի և ինժեներիայի ֆակուլտետի ուսանողների մոտ մեղիատիվ կոմպետենցիայի զարգացումը և դրա փորձարարական հիմնավորումը» ենթազբյուրում ներկայացված են փորձարարական ուսուցման գործիքակազմը, ընթացքը և արդյունքները: Նկարագրվում է առաջարկվող մեթոդիկայի արդյունավետությունը հիմնավորելու նպատակով ՀՌՀ ինժեներաֆիզիկական ֆակուլտետի երկրորդ կուրսում իրականացված փորձարարական ուսուցման նպատակը, փուլերը, ուսանողների համակազմը, ընթացակարգերը և արդյունքները: Փորձարարական ուսուցման նպատակն է եղել հիմնավորել առաջարկվող կաղապարի արդյունավետությունը: Փորձարարական ուսուցումն իրականացվել է ՀՌՀ ինժեներաֆիզիկական ֆակուլտետում: Փորձարարական խմբում ընդգրկվել են 38 ուսանող, և ստուգողական խմբում՝ 37 ուսանող: Ուսանողների գիտելիքները գնահատվում են 100 բալանոց համակարգով:

Փորձարարական ուսուցման ընթացքում ուսանողներին առաջարկվում են տեխնիկական, ֆիզիկայի ոլորտին վերաբերող անգլերեն բնագրեր: Փորձարարական խմբում ընդգրկված ուսանողները կատարում են մեր կողմից մշակված կամ ընտրված վարժությունները թարգմանության բոլոր փուլերում:

Իմաստաբանական վերլուծության ընթացքում ուսանողները կարողանում են կատարել նախադասության անդամների դիրքափոխություն, ճանաչել բառաձևը, այն փոխարինել մեկ այլ բառաձևով, կատարել տարբեր բնույթի փոփոխություններ շարահյուսական մակարդակում:

Հաջորդ փուլում փորձարարական խմբում ընդգրկված ուսանողներին առաջարկվում է փոխարինել մի թարգմանական հնարը մյուսով, կիրառել փոխատեղման, ավելացման, բացթողման, պատճենման հնարներ: Թարգմանության

ավարտական փուլում նրանք փորձում են գիտական և մասնագիտական տեքստը համառոտագրել, վերարտադրել, վերաշարադրել, ստեղծել նոր տեքստ:

**Փորձարարական ուսուցման ընթացքում ստուգվել են նշված բաժնի և ֆակուլտետի ուսանողների հետևյալ կարողությունները:**

Ուսանողների գիտելիքները գնահատվում են 100 բալանոց համակարգով:

**Ուսանողների նախաթարգմանական կարողությունների գնահատման աղյուսակ 1**

| Կարողություններ  | Փորձարարական խումբ, ուսանողների թիվը՝ 38 |               | Ստուգողական խումբ, ուսանողների թիվը՝ 37 |               |
|--|--|---------------|---|---------------|
|  | փորձի սկզբում                            | փորձի վերջում | փորձի սկզբում                           | փորձի վերջում |
| 1.տեքստի քերականական կառույցները նկարագրելու,  | 65                                       | 68            | 64                                      | 66            |
| 2.բառապաշարի տեսակները տարազատելու,  | 70                                       | 73            | 68                                      | 70            |
| 3.հիմնաբառերը ճանաչելու,   | 75                                       | 80            | 75                                      | 77            |
| 4.շարահյուսական, իմաստաբանական մակարդակներում տեքստի բովանդակային առանձնահատկությունները բացահայտելու, | 68                                       | 72            | 67                                      | 70            |
| 5.տեքստի հիմնական միտքը կամ գաղափարը ընդգծելու կամ առանձնացնելու,                                      | 70                                       | 75            | 70                                      | 72            |
| 6.առանձին փաստերը համադրելու, ընդհանրացնելու,  | 66                                       | 70            | 65                                      | 68            |

|  |    |    |    |    |
|--|----|----|----|----|
| 7.տեքստում առկա տեղեկատվությունը մեկնաբանելու,                 | 70 | 73 | 70 | 72 |
| 8.տեքստում առկա փաստերն ու երևույթները խմբավորելու,            | 66 | 70 | 65 | 67 |
| 9.նոր տեղեկատվության ներկայացնելու,                            | 68 | 72 | 66 | 68 |
| 10.ստացված արդյունքները դասակարգելու, համեմատելու, հարադրելու: | 70 | 75 | 68 | 70 |

Ստուգողական և փորձարարական խմբերում ներգրավված ուսանողների առաջադիմության համեմատությունը ցույց է տալիս, որ օտարալեզու տեքստի լեզվաբանական, նախաթարգմանական կարողությունների զարգացումը հիմք է ստեղծում ուսանողների մեղիատիվ կարողությունների շարունակական զարգացման համար: Ստացված արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձարարական խմբում ուսանողների առաջադիմությունը կազմում է 5,5%, ստուգողական խմբում՝ 3%:

Փորձարարական ուսուցման բոլոր փուլերում փորձ է արվել ցույց տալ վերոնշյալ կարողությունների զարգացման դինամիկան: Ինչպես ցույց տվեց համեմատությունը, փորձարարական խմբում ներգրավված ուսանողները բոլոր նշված չափանիշներով ցույց տվեցին իրենց առավելությունը:

**Փորձարարական ուսուցման ավարտական փուլում ստուգվել են ուսանողների բուն թարգմանական կարողությունները**, որոնք հիմնականում վերաբերում են մի բառը, արտահայտությունը, պարբերությունը փոխարինելու, փոխատեղելու, թարգմանվող տեքստում բաց թողած բառերը, արտահայտությունները կամ անավարտ մասն ավելացնելու, թարգմանության համարժեքությանը չխոչընդոտող տեղերը կրճատելու, բաց թողնելու, տեխնիկական, գիտական ոճը պահպանելու համար համապատասխան արտահայտությունները, անգամ պարբերությունները պատճենելու,

գիտական և մասնագիտական տեքստը համառոտագրելու, վերարտադրելու, վերաշարադրելու, նոր տեքստ ստեղծելու հնարներին:

Այսպիսով, կարելի է ներկայացնել ջննության առարկա ուսանողների թարգմանություն կատարելու նախնական կարողությունները:

**Ուսանողների թարգմանական կարողությունների գնահատման աղյուսակ 2**

| Կարողություններ   | Փորձարարական խումբ, ուսանողների թիվը՝ 38 |               | Ստուգողական խումբ, ուսանողների թիվը՝ 37 |               |
|---|--|---------------|---|---------------|
|   | փորձի սկզբում                            | փորձի վերջում | փորձի սկզբում                           | փորձի վերջում |
| 1.բառը,արտահայտությունը, պարբերությունըփոխարինելու,           | 76                                       | 83            | 75                                      | 76            |
| 2.թարգմանվող տեքստում բաց թողած բառերը լրացնելու,             | 77                                       | 88            | 75                                      | 77            |
| 3.բաց թողած արտահայտությունները լրացնելու,                    | 80                                       | 83            | 70                                      | 72            |
| 4.տեքստի անավարտ մասն ավելացնելու,                            | 70                                       | 75            | 70                                      | 73            |
| 5.թարգմանության համարժեքությանը չխոչընդոտող տեղերը կրճատելու, | 68                                       | 73            | 66                                      | 68            |
| 6.արտահայտությունները, պարբերությունները պատճենելու,          | 78                                       | 88            | 75                                      | 77            |
| 7.գիտական և մասնագիտական տեքստը համառոտագրելու,               | 67                                       | 73            | 65                                      | 68            |

|  |    |    |    |    |
|--|----|----|----|----|
| 8.թարգմանած տեքստը վերադրվածությունը,              | 65 | 70 | 66 | 68 |
| 9.թարգմանած տեքստը գրավոր վերաշարադրվածությունը,   | 66 | 70 | 63 | 66 |
| 10.թարգմանած տեքստի հիման վրա նոր տեքստ ստեղծելու: | 65 | 70 | 61 | 64 |

Ստացված արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձարարական խմբում ուսանողների առաջադիմությունը կազմում է 7%, ստուգողական խմբում՝ 3,3%: Ստացված տվյալները հաստատում են այն միտքը, որ մշակված մեթոդական համակարգն արդյունավետ է, քանի որ այն ուսանողների մոտ զարգացնում է գիտական տեքստերի թարգմանություն կատարելու կարողությունները: Փորձարարական խմբում ընդգրկված ուսանողներն ավելի արդյունավետորեն են իրականացնում մշակված վարժությունները, քանի որ նրանց մոտ զարգացած են օտարալեզու խոսքային գործունեության բոլոր տեսակները: Փորձարարական ուսուցման վերջում արձանագրվել է ուսանողների թարգմանական կարողությունների զարգացման միտում: Դա վերաբերում է մեղիատիվ մակարդակում մեկնաբանելու և թարգմանելու հմտություններին: Փորձարարական ուսուցումը ևս մեկ անգամ հաստատեց այն դրույթը, ըստ որի՝ մեղիատիվ հմտությունների զարգացումը անհրաժեշտ պայման է թարգմանական կոմպետենցիայի զարգացման համար:

#### Եզրակացություն

1. Գիտական տեքստերի համակարգված ուսուցումը ենթադրում է ինչպես մեղիատիվ կոմպետենցիայի, այնպես էլ մասնագիտական կոմպետենցիայի տեսանկյունից տեքստերի ըստ բնագրայնության, մատչելիության, պարզից դեպի բարդ, հեշտից դեպի դժվար սկզբունքներով տեքստերի ընտրություն:
2. Գիտական տեքստերի ընտրության սկզբունքներից առաջին պլան է մղվում ըստ տեքստի ոճական առանձնահատկությունների տեքստի ընտրության սկզբունքը: Դրա հետ մեկտեղ, կարևորվում են նաև ոչ գիտական, գիտահանրամատչելի

տեքստերը, որոնց շուրջ աշխատանքը նախորդում է գիտական ոճի տեքստերի թարգմանությանը և վերլուծությանը:

3. Ոչ բոլոր ինժեներ-ֆիզիկոսներն են կարողանում կատարել թարգմանվող տեքստի ոճական, խոսութային կամ գործաբանական վերլուծություն: Սակայն, չլինելով լեզվաբան-թարգմանիչ, նրանք շատ արագ են կողմնորոշվում ծանոթ թեմաներով անզլերեն տեքստեր թարգմանելիս:
4. Բառացի, ճշգրիտ, իմաստային, հարմարման, ազատ, հատկաբանական և այլ ռազմավարությունների կիրառումը պահանջում է տեխնիկական բուհի ուսանողից համապատասխան պատրաստվածություն, համապատասխան ռազմավարական կոմպետենցիայի մակարդակ, որն անհրաժեշտ է թե՛ բուն թարգմանության, թե՛ նախաթարգմանական և հետթարգմանական փուլերում:
5. Եթե արհեստավարժ թարգմանչի մեղիատիվ կոմպետենցիայի կառուցվածքում առաջին պլան են մղվում նրա լեզվաբանական կոմպետենցիան և ընդհանուր հենքային գիտելիքները, ապա ֆիզիկոսի մեղիատիվ կոմպետենցիայի կառուցվածքում առանցքային նշանակություն ունի նրա մասնագիտական կոմպետենցիան և մասնագիտական հենքային գիտելիքները:
6. Փորձարարական խմբի ուսանողների ցույց տված արդյունքները հաստատում են այն վարկածը, որ թարգմանության ուսուցման վարժություններն առանձին հանդես գալ չեն կարող և հանդիսանում են խոսքային և ոչ խոսքային վարժությունների կարևոր բաղադրիչ:
7. Ստացված արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ մշակված մեթոդական համակարգն արդյունավետ է, քանի որ խնդիր է դրվում զարգացնել ուսանողների մեղիատիվ կոմպետենցիայի բոլոր տեսակները՝ թարգմանություն, մեկնություն, վերլուծություն՝ դրանով իսկ բարձրացնելով անզլերենի ուսուցման դասընթացի արդյունավետությունը:

#### Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Տեխնիկական բուհի ուսանողի մեղիատիվ կոմպետենցիայի ձևավորման նախադրյալներն անզլալեզու սկզբնաղբյուրների թարգմանության ուսուցման գործընթացում.//Տարև Գիտակրթական Համալիր Մանկավարժական Միություն 4(71), Զանգակ հրատարակչություն 2018թ., էջ 48-53:
2. Գիտական տեքստերի թարգմանության ուսուցման ռազմավարությունը մասնագիտական կողմնորոշման անզլերենի դասընթացում.//Մխիթար Գոշ՝ ISSN 1829-3085: Գիտական և ուսումնամեթոդական հոդվածներ: Տարեգիրք 3(48).. 2018, էջ 13-17: Համահեղինակ՝ Կարապետյան Ի.Կ.

3. Միջնակուսային հաղորդակցման դերը և ազդեցությունը օտար լեզվի դասավանդման վրա // Օտար Լեզուները Բարձրագույն Դպրոցում 14. Եր., 2013թ., էջ 210-218:
4. Անգլերեն գիտական տեքստերի ընտրության և ուսուցման լեզվաճանաչական հայեցակերպը // ԵՊՀ. Օտար Լեզուները Բարձրագույն Դպրոցում ISSN 1829-2453. 2(25) 2018թ., էջ 130-139:
5. Implementation of ESP course (on the basis of technical sublanguages) in bilingual class // ՀՌՀ, Լրաբեր, ISSN 1829-0450 Հայ-Ռուսական Համալսարանի Սերիա՝ հումանիտար և հասարակական գիտություններ, (30) ՀՌՀ հրատարակչություն #3/2018, էջ 183-188:
6. The Relevance of Teaching English Academic Writing // 0450 Հայ-Ռուսական Համալսարանի Սերիա՝ հումանիտար և հասարակական գիտություններ, (34) ՀՌՀ հրատարակչություն #1/2020, էջ 122-127:

#### ԵՏԱՅԻ ՄԵՐԻ ՏԱՄՅԵԼՈՎՆԱ

#### ՄԵՏՈԴԻԿԱ ՕՒԲՈՒՇՈՒՄԱ ՍԵՐՎՈՒՄԱ ԱՆԳԼՈՅԻԿՆԻԿ ՆԱՍՏԻՑՈՒՄԱ ՆԱ ԿՈՒՐՏԱԿ ՍԵՐՎՈՐԻԵՆՏԱՑԻԱ

Դիսսերտация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02. «Методика преподавания и обучения» (английский язык). Защита диссертации состоится 30-ого марта 2023г., в 12<sup>00</sup> ч. на заседании специализированного совета по педагогике 020 «Педагогика» ВАК РА по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Меца 17.

#### ՔԵԶԻՍՄԵ

**Актуальность исследования.** Актуальность исследования обусловлена необходимостью создания методической системы формирования умения переводить англоязычные научные тексты, внедрение которой может повысить эффективность профессионально-ориентированного курса обучения английскому языку.

**Цель исследования:** Разработка и внедрение методической системы развития переводческих навыков и умений англоязычных научных текстов.

**Объектом исследования** является преподавание английского языка в техническом вузе.

**Предметом исследования** является процесс формирования умения переводить англоязычные научные тексты.

#### ԶաԴաԿԻ իսսևոճՎանա:

1. изучать научно-педагогическую литературу, связанную с переводом научного текста, а также преподаванием перевода,
2. систематизировать научные тексты, используемые в образовательных целях,
3. уточнить принципы отбора научных текстов, используемых в учебных целях, стратегии обучения их переводу,
4. разработать систему упражнений, развивающих умение переводить научные тексты, используемые в учебных целях,
5. обосновать эффективность предлагаемой методической системы путем экспериментального обучения.

#### ՆաճնաԿ յՈՎԻԶՆԱ իսսևոճՎանա:

1. С точки зрения развития медиативной компетенции уточнены способности студента, развитие которых является необходимым условием эффективного перевода научных текстов.
2. Разработана и применена новая система упражнений для развития умения студентов переводить научные тексты (физика), обоснована соответствующая учебная программа и ее эффективность.
3. Создана методическая система развития умений студентов переводить тексты профориентации (физика), которая может способствовать формированию и развитию медитативной, языковой, коммуникативной компетенций студентов.
4. Для обучения физике на английском языке использовался мультимедийный метод. На веб-платформе Google Classroom представлены 8 тематических слайдов урока, каждый из которых включает систему упражнений.
5. С помощью программы Microsoft Office Excel проанализированы результаты предэкспериментального и постэкспериментального тестирования, создана модель анализа результатов, которая позволяет анализировать результаты как индивидуально, так и во всех группах одновременно.

**Теоретическая значимость исследования.** Изучена и проанализирована переводческая, методическая, общеязыковая литература с точки зрения обучения переводу научных текстов. Создана эффективная модель обучения переводу научных текстов, которая может служить основой для постоянного пересмотра и совершенствования соответствующей методической системы.

**Практическая значимость исследования.** Результаты исследования могут быть применены в процессе обучения английскому языку в неязыковом вузе, создании и применении учебников и пособий, программ, отбора профессиональных текстов, а также введения профессиональной лексики в курс научно-технического английского. Использование заданий, которые развивают полноценные умения и навыки перевода, может помочь повысить эффективность курсов научно-технического английского языка.

**Структура и объем работы.** Диссертация объемом 120 страниц состоит из введения, двух глав, заключения, списка литературы и приложений.

#### MERI YESAYAN

#### METHODOLOGY OF TEACHING TRANSLATION OF ENGLISH SCIENTIFIC TEXTS IN A PROFESSIONAL ORIENTATION COURSE

Thesis for degree of candidate for pedagogical sciences, specialty 13.00.02 – Teaching and Learning Methodology (English Language). The defense of thesis will be held at 12<sup>00</sup> on the 30th of March 2023, at the session of the Special Board 020 SCC (Supreme Certifying Committee) to award scientific degree at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan: 0010, 17 Tigran Mets, Yerevan.

#### SUMMARY

**The relevance of the research.** The relevance of the study is conditioned by the need to create a methodological system for the formation of the ability to translate English scientific texts, the introduction of which can increase the effectiveness of a professionally-oriented English language course.

**The aim of the research** is to work out a methodological system for the development of translation skills and abilities of English scientific texts.

**The object of this research** is teaching English in the technical university.

**The subject of the research** is the formation of a methodological system of the abilities to translate English scientific texts.

The following objectives have been proposed in accordance with the purpose, object and subject of the research:

1. To study the scientific and pedagogical literature associated with the translation of the scientific text, as well as teaching translation,
2. Systematize scientific texts used for educational purposes,
3. To clarify the principles of selecting scientific texts used for educational purposes, strategies of teaching translation,

4. To develop a system of exercises that facilitates the ability to translate scientific texts used for educational purposes,

5. To substantiate the effectiveness of the proposed methodological system through experimental training.

#### The scientific novelty of the research

1. From the point of view of the development of mediative competence, the student's abilities are clarified, the development of which is a prerequisite for the effective translation of scientific texts.

2. A new system of exercises was developed and applied to develop students' ability to translate scientific texts (on the basis of physics sublanguage), the corresponding curriculum and its effectiveness were substantiated.

3. A methodological system for the development of students' skills has been created to translate the texts of career guidance (physics), which can contribute to the formation and development of meditative, linguistic, communicative competencies of students.


4. To teach physics in English, a multimedia method was used. The Google Classroom web platform presents 8 thematic lesson slides, each of which includes a system of exercises.

5. Using the Microsoft Office Excel program, the results of pre-experimental and postexperimental testing were analyzed, a model of analysis of the results was created, which allows to analyze the results both individually and in all groups at the same time.

**The theoretical value of the research.** Translation, methodological, general language literature from the point of view of teaching the translation of scientific texts has been studied and analyzed. An effective model of teaching the translation of scientific texts has been created, which can serve as the basis for constant review and improvement of the corresponding methodological system.

**The practical value of the research.** The results of the study can be applied in the process of teaching English in the technical faculty, the creation and use of textbooks and manuals, programs, the selection of professional texts, as well as the introduction of professional vocabulary into the course of scientific and technical English. The use of tasks that develop full-fledged skills in translation can help to increase the effectiveness of scientific and technical English courses.

**The structure and volume of the research.** The dissertation consists of 120 pages, an Introduction, 2 Chapters, Conclusion, References, Bibliography, and Appendices.



The first part of the document is devoted to the study of the...  
 The second part of the document is devoted to the study of the...  
 The third part of the document is devoted to the study of the...  
 The fourth part of the document is devoted to the study of the...  
 The fifth part of the document is devoted to the study of the...  
 The sixth part of the document is devoted to the study of the...  
 The seventh part of the document is devoted to the study of the...  
 The eighth part of the document is devoted to the study of the...  
 The ninth part of the document is devoted to the study of the...  
 The tenth part of the document is devoted to the study of the...  
 The eleventh part of the document is devoted to the study of the...  
 The twelfth part of the document is devoted to the study of the...  
 The thirteenth part of the document is devoted to the study of the...  
 The fourteenth part of the document is devoted to the study of the...  
 The fifteenth part of the document is devoted to the study of the...  
 The sixteenth part of the document is devoted to the study of the...  
 The seventeenth part of the document is devoted to the study of the...  
 The eighteenth part of the document is devoted to the study of the...  
 The nineteenth part of the document is devoted to the study of the...  
 The twentieth part of the document is devoted to the study of the...  
 The twenty-first part of the document is devoted to the study of the...  
 The twenty-second part of the document is devoted to the study of the...  
 The twenty-third part of the document is devoted to the study of the...  
 The twenty-fourth part of the document is devoted to the study of the...  
 The twenty-fifth part of the document is devoted to the study of the...  
 The twenty-sixth part of the document is devoted to the study of the...  
 The twenty-seventh part of the document is devoted to the study of the...  
 The twenty-eighth part of the document is devoted to the study of the...  
 The twenty-ninth part of the document is devoted to the study of the...  
 The thirtieth part of the document is devoted to the study of the...  
 The thirty-first part of the document is devoted to the study of the...  
 The thirty-second part of the document is devoted to the study of the...  
 The thirty-third part of the document is devoted to the study of the...  
 The thirty-fourth part of the document is devoted to the study of the...  
 The thirty-fifth part of the document is devoted to the study of the...  
 The thirty-sixth part of the document is devoted to the study of the...  
 The thirty-seventh part of the document is devoted to the study of the...  
 The thirty-eighth part of the document is devoted to the study of the...  
 The thirty-ninth part of the document is devoted to the study of the...  
 The fortieth part of the document is devoted to the study of the...  
 The forty-first part of the document is devoted to the study of the...  
 The forty-second part of the document is devoted to the study of the...  
 The forty-third part of the document is devoted to the study of the...  
 The forty-fourth part of the document is devoted to the study of the...  
 The forty-fifth part of the document is devoted to the study of the...  
 The forty-sixth part of the document is devoted to the study of the...  
 The forty-seventh part of the document is devoted to the study of the...  
 The forty-eighth part of the document is devoted to the study of the...  
 The forty-ninth part of the document is devoted to the study of the...  
 The fiftieth part of the document is devoted to the study of the...

ՀՀ Ազգային գրադարան



NL1879895

